Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ուսուցչի թափուր տեղերի համար «ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ մաթեմատիկա-50 ժամ, ինֆորմատիկա-11 ժամ, քիմիա-16 ժամ, աշխարհագրություն-15.5 ժամ, կենսաբանություն- 6 ժամ, բնագիտություն- 2 ժամ, երաժշտություն-11.5 ժամ, ՆԶՊ-6 ժամ:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ) §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 8-ից մինչև 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումն կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա նոյմբերի 23-ին, ժամը՝ 14:00-ին, Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արարատ Իսակովի 2:

Տեղեկությունների համար զանգահարել 094-34-90-76 հեռախոսահամարով:

Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի
Հհ՝ 900428000179
Կենտրոնական գանձապետական հաշիվ
հվհհ – 04103892